


10835

ՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՐԻՍ

ՊԻՈՆԵՐ

ԿԱՐԼ ՄՅՈՒԼԼԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ



Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

22 MAY 2013

10835

09 DEC 2009
24 SEP 2006

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ՅԿԻՈՆ

Կ-54 Այ

Պ Ի Ո Ն Ե Ր
Կ Ա Ր Լ Մ Յ Ո Ւ Լ Լ Ե Ր Ի
Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Ը

1003
14178

(Գերմանիայի Ելգենբուրգ ֆադաֆի ՄՈՊՐ-ի
մանկասան կյանքից)

Ժողովեց՝ Ի. ԿԼԱՍԻՆԻ

Թարգմ. Ե.



Հ. Ս. Ի. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՇՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

ՊԱՏԱՆԻ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ

Բանվորների փոքրիկ լեքեխաների դուրսը
նր կապիտալիստական լեքիլրներում շատ ծանր
է: Գերմանիայում, որինակ, բոլոր լեքեխաների
կեսից ավելին ամենեկին կաթ չի ստանում, և ընդ-
հանրապես շատ վատ է սնվում: Դրանից բացի,
բանվորների լեքեխաները տանջվում են հիվան-
դություններով: Գերմանական Կոբլենց քաղա-
քում 287 լեքեխաներից 79-ը հիվանդ են ռախի-
տով*), 47-ը թոքախտով և 13-ը գեղձախտով:

Հինգենբուրգ քաղաքում բանվորական լեքե-
խաների միայն մեկ լեքրորդն է առանձին անկո-
ղին ունեցել:

Սոված, ցրտահար, մերկ ու բոկոտն, հաճախ
անապաստան, հիվանդ—այդպես են ապրում բան-
վորների լեքեխաներն արտասահմանում: Բայց

*) Վոսկրախտով հիվանդի վոսկորները կանոնա-
վոր զարգանալու փոխարեն մնում են կակուղ վիճա-
կում և ծովում են:

դրանք ընդհանրապես բանվորների չերեխաներն են։ Ապա ի՞նչպես են տանջվում այն հեղափոխական բանվորների չերեխաները, վորոնց բուրժուազիան բանտ է նստեցրել կամ գնդակահարել և մահամերձ տանջել։

Նրանք փոշինչ չունեն նրանք գրկվել են վերջին բաժակ կաթից և չոր հացից։ Նրանք կարող են փոշնչանալ, — այսպես է դատում բուրժուազիան։

Բայց այդպես չեն դատում մյուս չերկիրների բանվորները, նրանց չեղբայրները, ովքեր գնդակահարված են կամ նստած բանտում Բոլոր չերկիրների բանվորները կազմակերպվել են ՄՈՊՐ-ում նրա համար, վորպեսզի ոգնեն բանտարկված բանվորներին և մահվան ճիրաններից դուրս կորզեն ու դատարարակեն նրանց չերեխաներին ու կանանց։

Վերջին չերկու տարվա ընթացքում ՄՈՊՐ-ը փրկել է մահից ու փողոցից բանվորների հարյուրավոր ու հազարավոր չերեխաների և մայրերի։ Այս միայն Գերմանիայում։ Շատ բան է արված և մյուս չերկիրներում, վորտեղ չերեխաների դրությունն ավելի վատ է։

ՄՈՊՐ-ը բոլոր չերկիրներում կառուցում է մանկատներ այն չերեխաների համար, վոր զոհ են դարձել բուրժուազիայի վրեժխնդրությանը, ծաղրանքին և բռնությանը։

Յերեխաների աչքի առաջ բուրժուազիան սպանել է նրանց հայրերին, ավերել նրանց տները, ծաղրի լենթարկել նրանց մայրերին։

Այս ամենը խորը տգլավորվել է չերեխաների հոգում։

Սպիտակ տերորի զոհ դարձած բանվորների չերեխաները, վորոնց ՄՈՊՐ-ը փրկել է սովամահությունից, հիվանդություններից, աղքատությունից և թափառումներից, գալիս են մանկատները, վորպեսզի դաստիարակվեն և սովորեն բանվորական գործի համար։

Ելլերոբուրգի աշակերտի տներից մեկի մասին է խոսվում այս գրքույկի մեջ։ Այդ տունը գտնվում է Թյուրինգյան անտառի ամենագեղեցիկ մասում և շրջապատված է մեծ պարտեզով։ Այստեղ չերեխաներն ունեն սքանչելի ոգ և լավ սրնունդ։ Մանկատան ընդունվում են 6-ից մինչև 15 տարեկան չերեխաները։ Մանկատունը կառավարում է մանուկների խորհուրդն, այսինքն՝ իրենք չերեխաները։

Այդ տան չերեխաներից չերեքի հայրերը զրնդակահարված են, քսանհինգ չերեխայինը նստած են բանտում, մեկի հորը վիրավորել է վստիկանությունը, մեկինը մեռել է հիվանդանոցում, մեկինն էլ թագնված է։

Այս է ալդ մանկատան բնակչությունը։

Մեր պատանի ընթերցողները կկարողանան
ՄՈՊԲ-ի մանկատան նախկին բնակիչ պիոներ
կարլ Մյուլլերի նամակներով ծանոթանալ Ել-
զերսբուրգի չերեխաների փոքրիկ «հանրապետու-
թյան» կյանքին:

ՄՈՊԲ-ի ԿԵՆՏԿՈՒԹ ԻՐԱՏԱՐԱԿՆԵՐՆԵՐ

I.

ՎՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՆ ԻՆՉՈՒ ԲԱՐԿԱՅԱՎ.

Այն քաղաքում, վորտեղ գտնվում էր մեր
մոպրյան տունը, վոստիկանապետը շատ, շատ չար
մարդ էր:

(Տեսե՛լ եք չերեխիցե Բուլդոգ (շան մի տե-
սակը), վոր շարունակ ատամներն ե ցուլց տալիս:
Իսկ և իսկ ալգալիսին եր վոստիկանապետը):

Մի անգամ վոստիկանապետն իմացավ, վոր
արտասահմանից մանկատուն ե չեկել մի ընկեր:

«Ը՛հ, չե՛ղավ»,—մտածեց նա ինքն իրեն: Նրա
գործը չեր, թե ինչու համար կարող եր գալ ալգ
ընկերը Չփորձեց ալգ մասին նրան հարց ու փորձ
անել, ալ միայն սաստիկ ուրախացավ:

«Բռնեցի ձեզ, վերջապես,—մտածեց նա.—
հիմա ձեզ կսովորեցնեմ «Խոտերնացիոնալ» չեր-
գել, Լենինի անունն ազդարարել... Յես ցուլց
կտամ ձեզ, թե ինչ ե նշանակում չհարգել թա-
գավորին և նրա որենքները»:

Յեվ նա հրամայեց իր չերիտասարդներին

վորպեսզի չերեքր, նրանցից ամենաուժեղները, անմիջապես գնան մանկատուն և բերեն ալգ վրտանգավոր բալլշիկին: Յեւ քիչ եր մնացել, վոր ալգպես լիներ: Համենայն չեպս, պարոն վոտիկանապետը շատ եր ցանկանում ալգ, վոր ալգպես լիներ: Նա ուզում եր իր գլխապետութունն ապացուցել, վոր մոպըյան մանկատունը—վոչ թե դաստիարակչական հիմնարկութուն ե, ալ բալլշիկյան բուն, և աշխտեղ վոչ միայն դաստիարակում են քանտում նստած կամ սպանված հեղափոխականների չերեխաներին, ալ և հարմար դեպքում ումներ են պատրաստում, թե պլաններ մշակում և վոր ամենից կարեորն ե—բալլշիկյան գաղտնիքներ են պահում:

Յերեք չերիտասարդը ճանապարհ ընկան:

Բայց վոտիկանական վարչության կիսաքաղց ու դժբախտ գրագիրը, լսելով հրամանը, հեռախոսով ահա հաղորդեց մանկատուն:

Քիչ եր մնացել, վոր նա ուշացներ հաղորդագրութունը, վորովհետեւ մինչ աշխտեղ ուշքի կգալին, վոտիկանության քաջերն արդեն մոտեցան մանկատան մուտքին:


Ուսուցչուհին լաց չեղավ, իսկ չերեխաների մի մասն ել նրան հետեց: Բայց լաց չեղավ չեկ-վոր ընկերը, վորն արդեն վերջացրել եր իր աշխատանքը՝ ստուգել, արդյոք, գոհ են չերեխա-

ները, քննել պարասմունքների ընթացքը և ալն: Նա անմիջապես հառախոսով զանգահարեց հիվանդ մանուկների մեկուսարանը և խնդրեց բերել իր համար սանիտարի խալաթը: Խալաթը հասցրին նրան ահա մոմենտին, չերը վոտիկաններից չերկուսը մտնոն առաջին սենյակը:

Յերրորդը մնաց մուտքի մոտ, վորպեսզի տընից վոչ վոքի գուրս չթողնի:

Մինչ առաջին սենյակում ուսուցչուհին հեծկըլտալով բացատրում եր, վոր այստեղ վոչ մի ոտար մարդ չկա, ընկերն արագ-արագ հագավ սպիտակ խալաթը, մահճակալի վրա պսակեցրեց չերեխաներից մեկին և նրա շրթունքներին սուպոնի վրիվուր քսեց: Նա հագիվ վերջացրեց աչս, չերը չերկու վոտիկաններ աղմուկով ներս ընկան: Մեր ընկերը, ակնոցները մի քիչ իջեցնելով, խիստ նայեց նրանց, և ձեռքով ցույց տալով չերեխային, հարցրեց, միթե քննության համար անհրաժեշտ ե, վորպեսզի նրանք ալգպես աղմկեն: Յեւ նույնիսկ չսպասելով նրանց պատասխանին, կանչեց վոտիկաններից մեկին և խնդրեց, վոր ոգնի իրեն չերեխային դնել պատգարակի վրա: Վորովհետեւ ուրիշ հասակավոր մարդ չկար, «պարոն բժիշկը» բռնեց պարգարակի մի ծալրից, իսկ վոտիկանը մյուս ծալրից և չերեխային տարան մեկուսարան: Դռան մոտ կանգնած վոտիկանը,

տեսնելով, վոր հիվանդ յերեխա յեն բերում, շտապ բաց արավ դուռը:



...«Պարոն բժիշկը» բռնեց պատգարակի մի ծայրից, իսկ վոստիկանը մյուս ծայրից և յերեխային տարան»...

Հասնելով մեկուսարան, ընկերը շնորհակալություն հայտնեց վոստիկանին ցույց տված ոգնության համար և նա վերադարձավ, վոր շարունակի վորոնեւ «անիծյալ բալլշիկին»:

«Պարոն բժիշկը» սրբեց սապոնի փրփուրը տըդալի շրթունքներէց և նա մի ալնթարթում «առողջացավ»: Նա դուրս ցատկեց անկողնից և յետեւի դարպասով դուրս լեկավ փողոց տեսնելու,

աջտեղ եւ ուրիշ մարդ կա: Իսկ «պարոն բժիշկը» հանեց սպիտակ խալաթը, և յերբ վերադարձած յերեխան հայտնեց, վոր աջտեղ վոչ վոք չկա, համբուրեց նրան, և առանց շտապելու, հանգիստ հեռացավ:

Վոստիկանները յերկար գեկուցում գրեցին վոր ՄՈՊՐ-ի տան պատերից մեկի վրա կախված է կարմիր դրոշակ, մյուսի վրա լենինի նկարը, վոր յուրաքանչյուր յերեխա կարմիր վզկապ է կրում, բայց վոչ մի ոտար մարդ աջտեղ չկա:

Վոստիկանապետը սրա վրա աջապես կատաղեց, վոր փրփուրը բերանին աղաղակել սկսեց:

II

ԾԻԾԵՌՆԱԿԸ

Յես ուզում եմ պատմել մեր մանկատանը պատահած մի անցքի մասին:

Յերեկոյան պարապմունքներին պետք է զրույց ունենայինք Համբուրգ, Բրեմեն, Լյուբեկ և Քիլ քաղաքների պատմութեան մասին: Իհարկե, այդ զրույցը նման չեր բուրժուական դպրոցների պատմութեան դասերին, վորտեղ խոսում են միայն անցած հեռու ժամանակների մասին: Այդ զրույցներին խոսվում եր այն մասին, թե ինչ են արել Քիլի նավաստիները 1918 թվի հեղափոխութեան ժամանակ, կամ թե ինչ տեղի ունեցավ Համբուրգում 1923 թվին, չերբ այդ քաղաքի բոլոր մեծ փողոցներում բարրիկադներ ելին շինում, չերբ գնդացիներն ելին ճարձատուում և բռնափորները կրում բուրժուականների դեմ:

Յե՛վ չերբ խոսք բացվեց Համբուրգի մասին, այն ժամանակ Ֆրիցն ու Հանսը շատ բան կարող ելին պատմել այնտեղ պատահածների մասին: Չե՛

վոր նրանցից մեկի հայրը սպանվել եր բարրիկադների վրա, իսկ մյուսի հայրը մինչև այսօր տառապում է բանտում նրա համար, վոր աջտեղ քաջաբար կռվել է:

Մինչդեռ տղաները զբաղված ելին այդ դասով, № 2 ննջարանում տեղի ունեցավ այն դեպքը, վորի պատճառով հուզվեց ամբողջ մանկատունը: Ժամը 7-ի մոտ ննջարանից ականջ ծակող ձայներ լսվեցին: Տղաներից մեկը վազեց վերին հարկը, իմանալու թե բանն ինչումն է: Մի քանի րոպեից հետո նա յետ վազեց և անկապ, շնչակտուր սկսեց պատմել, վոր ինքն ու Մանյան ննջարանի պատուհանից դիտել են, թե ինչպես յերեկ յե՛ված նորեկը, տանջում եր ծիծեռնակին.—նրա վորից թե՛ր կապելով, թողնում եր, վոր լուսամուտից ներս թռչի և ապա յետ քաշում նրան: Յերբ նա ննջարան է մտնում, ծիծեռնակն արդեն չեր կարողանում թռչել, նա միայն ցատկում եր սենյակում: մահճակալների վրա, իսկ տանջողը նայում և ծիծաղում եր:

Դասն ընդհատվեց: Ահա՛վարն ու տղաներից յերեք հոգի ննջարան բարձրացան, վորպեսզի ծիծեռնակի հետագա տանջանքներին արգելք հանդիսանան: Բանալով դուռը, նրանք տեսան, վոր ծիծեռնակն այլևս չի շարժվում, իսկ նոր տղան հենց այդ ժամանակ մի փետուր եր պոկում նրա պոչից:

Ֆրիցը չկարողացավ գտնել իրեն, մոտեցավ նորեկին, բռնեց նրա ուսերից և բղավեց վրան— «Դու գազան ես»: Նրանց խնամքը գուր անցավ, կես ժամ անց ծիծեռնակը շուռնչը փչեց:

Ֆրիցի այդ բռնկումից հետո, փոչ վոք չեր ուզում խոսել նորեկի հետ:

Ղեկավարը գուր եր բացատրում նրանց, տղան մեղավոր չե, վոր դաստիարակվել է աջնալիսի պալմաններում, ուր չեր կարողանա սովորել լավ գործը վատից տարբերել,— չերեխաներին փոչ մի կերպ չեր հաջողվում համոզել, վորպեսզի նրանք փաղաքաբար վերաբերվելին նորեկին: Վոչ վոք չեր ուզում նրա հետ խոսել, և չեթե նա վորևե մեկի հետ խոսում եր, վերջինս չերեսը շուռ եր տալիս և չեր պատասխանում նրան:

Հաջորդ որը չերեկոյան դեմ նման դրությունն անտանելի դարձավ, ուստի և սենյակների պատգամավորները վորոշեցին գործը չհետաձգել և հենց այդ չերեկոյան քննել և վճիռ կայացնել: Յերեկոյան ժամը 8-ին, քնե գնալուց առաջ հավաքվեց տնային խորհուրդը: Խորհրդի 8 անդամներից բացի, խորհրդակցությանը մասնակցեց նաև Մանյան, վոր առաջինն եր նկատել, թե ինչպես նորեկը տանջում եր ծիծեռնակին:

Ֆրիցն առաջարկեց ամենից առաջ լսել նորեկին, իսկ Մանյան առաջարկեց ամենից առաջ

քննել անկետան և նորեկի անձնական տվյալները, վորպեսզի նրա մասին ամեն ինչ մանրամասն իմացվի: Այդ առաջարկն ել ընդունվեց: Նրա անկետից և թղթերից պարզվեց, վոր նա 11 տարեկան է, սովորել է ժողովրդական դպրոցի 3-րդ դասարանում, բայց հաջորդ դասարան չի փոխադրվել: Նրա հայրն արդեն հինգերորդ տարին է, ինչ նստած է բանտում, մայրն աշխատում է ոսլալի գործարանում, տանը նա ունի 6 տարեկան մի քույր և 8 տարեկան չեղբայր ել: Մոր նամակից, վոր նա չերեխայի հետ ուղարկել եր Մոսկովի տեղական կազմակերպությանը, չերևաց, վոր տղան արդեն մի քանի տարի չե, ինչ թողընվել է իր բախտին, վորովհետև բոլոր չերեխաներին խնամել է 70 տարեկան տատը, վորը հազիվ կարողացել է կառավարել մյուս չերկու փոքրերին:

Այսքանը բավական եր փոքրիկ խորհրդակցությանը: Նրանք արդեն գիտելին ախրքան, վորքան նրանց անհրաժեշտ եր, ինչպես հարկն է ազդելու կենդանիներին տանջող չերեխայի վրա:

Ներս կանչեցին և նրան: Անցած որերն արդեն նրա մեջ առաջացրել էին վորոշ փոփոխություններ: Նա դեռ չգիտեր, թե ինչու համար են կանչել, բայց արդեն սկսել եր զգալ վոր իր արարքը լավը չեր: Յերբ նա ներս մտավ և մի հայացք դցեց ներկա չեկոյների վրա, մի քիչ շփոթվեց և չգի-

տեր, ինչ անի: Նրան առաջարկեցին նստել և խորհրդակցութեան նախագահը բացատրեց նրան, թե ինչու չե կանչել:

Ինչպէս քաղել աչի հանցանքը, վոր նա կատարել է:

Ամենից առաջ Մանյան պետք է պատմեր աչի ամէնը, ինչ տեսել էր:

Աղջիկն անցունքն աչքերին պատմեց, թե ինչպէս աղիողորմ ծվծվում էր դժբախտ ծիծեռնակը և ինչպէս չարութեամբ ծիծաղում էր նորեկ տղան նրա տանջանքների վրա:

Դրանից հետո նախագահը հարց տվեց նորեկ տղային, թե արդոք, Մանյայի պատմածին վորեւէ բան ունի՞ ավելացնելու:

Նորեկ տղան պատասխանեց, վոր նա ծիծեռնակին ամենեկին չի տանջել, այլ միայն խաղացել է նրա հետ, իսկ պոչը պոկել է միայն նրա համար, վոր ծիծեռնակն այլևս չի կամեցել շարունակել խաղը:

Տեսալին խորհրդի անդամներն իրենց հազիվ գտայցին, վորպէսզի հուզմունքից տեղներից վեր չթռչեն: Չե վոր մոտ անցյալում, այս գարնանը, տղաներից յուրաքանչյուրը մի-մի արհեստական բուն պատրաստեց այգու ծառերի վրա և շարունակ անհամբեր պստում էր, թե յերբ պետք է այս կամ աչի թռչունը գրավի բունը:

Յերբ նորեկ տղան հայտարարեց, վոր նա այլևս վռչինչ տեսել չի կարող, խորհրդի անդամները մեկը մյուսի յետևից վեր կացան և իրենց առաջարկներն արին:

Հանսն առաջարկեց կանչել տղայի մորը և խոսել նրա հետ աչի մասին, թե ինչպէս վարվել տղայի հետ: Լենան գոնում էր, վոր նրան պետք է անպայման արտաքսիլ մանկատանից: Բայց այդ առաջարկին դեմ չեկան ամենքը: Նման բան Մոպրում տեղի ունենալ չէր կարող: Ֆրիցը խորհուրդ տվեց հարցնել հենց չերեխային, թե նրա կարծիքով ինչպէս պետք է վարվել նրա հետ:

Բայց չերբ խորհրդակցութունը հասավ այդ առաջարկի քննութեանը, ժամը 10-ը իսկեց, ուստի և վորոշում ընդունելը հետաձգվեց հետևյալ օրը:

Հետևյալ օրը, ըստ շաբաթվա ծրագրի, կինոյերեկո չեր: Խորհրդակցութեան անդամներից մեկն աշխատում էր կինո-ապարատի վրա, իսկ մյուսը նշանակված էր նկարի մակագրությունները բարձր կարգաւու փոքրահասակների համար:

Յերբորդ օրը կիրակի չեր, այնպէս վոր վորոշումը հետաձգվեց չերկուշաբթի օրը:

Դեռ ևս շաբաթ օրը հավաքվել էր մոտ 25 ստորագրութուն, վոր պահանջում էին, վորպէսզի այդ դեպքը քննութեան սանովի ամբողջ մանկատան ընդհանուր ժողովում: Ուստի և խորհրդակցութունը շաբաթ օրը վերջի վերջոյ կհասարկուէր:



վաքվեց և վորոշեց յերկուշարթի որը հրավիրել ընդհանուր ժողով: Տան ընդհանուր ժողովները միշտ կրում ելին վորոշ հանդիսավոր բնութ. նը-
րանք հրավիրվում ելին մեծ դահլիճում, վորի պատերը զարդարված ելին գեղեցիկ նկարներով:

Մինչև հիմա դեպք չի չեղել, վորպեսզի մի մարդու համար ընդհանուր ժողով գումարվի: Ուս-
տի հարցն ամենքին հուզել եր և ամեն-ը միմի-
աջն դրա մասին ե, վոր խոսում ելին:

Բայց այժմ արդեն ամենքն աչնպես յարված չեին նորեկ տղայի դեմ, ինչպես յերեք որ առաջ: Աղջիկները, հատկապես, գտնում ելին, վոր նրան պետք ե նեւ ել չնայած Լենտն ջերմեռանդ ազի-
տացիա յեր մղում մանկատանից նրան արտաքսե-
լու ոգտին:

Ընդհանուր ժողովին հավաքվեցին վոչ միայն մանկատան բոլոր յերեխաները, այլ և վեց յերե-
խա մոտակա դպրոցից:

Թեպետ և Ֆրիցը ժողովը վարում եր չեռան-
դուն կերպով, աչնուամենայնիվ նա բուռն բնութ. կրեց:

Վերջ ի վերջո հանդես չեկան յերկու վորո-
շակի տեսակետ. ըստ մեկի—անհրաժեշտ և պար-
սավանք հայտնել ծեծեռնակին տանջողին, իսկ
ըստ մյուսի—նրան վոչ մի տատփի չպետք ե յեն-
թարկել, այլ պետք մեծ ուշադրութ. յուն դարձնել
նրա դատարարակութ. յան վրա:

Տղաներից մեկը վեր կացավ և հայտարարեց,
վոր միայն բուրժուաներն են այդպես ուռչնում
թուշունի գործը:

Աչն ժամանակ Ֆրիցը վեր կացավ և ասաց.—

— Ճշմարիտ չե, վոր այդ բուրժուական ա-
ռաքինութ. յուն ե: Ձե վոր կան թուշուների սիրա-
հար բուրժուաներ, վորոնք պահում են նրանց գեղե-
ցիկ վանդակներում, բայց ինչ գործ ունի այստեղ
դեպի թուշունները տաժած սերը: Նույնիսկ այդ
գեղեցիկ վանդակները չնչին գրոշներով պատրաս-
տում են նրանց համար բանտերում նստած մեր
հայրերը,— ասաց նա:

— Մենք սիրում ենք թուշուններին այլ կերպ,
սիրում ենք նրանց ազատ, մենք սիրում ենք
նրանց նրա համար, վոր գիտենք, թե ինչքան շատ
մարդիկ են նրանց հետապնդում, և գիտենք, վոր
թուշունը մարդուն ոգուտ ե տալիս: Բայց չեթե
մենք ղեկավարվելինք միայն դեպի թուշունները
տաժած մեր սիրով, աչն ժամանակ մենք պետք
ե շատ խիստ լինելինք նորեկ տղային պատժելու
մեջ: Բայց չեթե սիրում ենք թուշուններին նրա
համար, վոր նրանք ոգտակար են հասարակութ. յան,
և նրանց հետապնդում են աչնպես, ինչպես և
բանվորներին, ապա մենք այստեղ պետք ե նախ
հասկանանք մարդուն և հետո խոսենք թուշու-
ների մասին: Կոգնենք նրան մեր պատժով:

Բնավ: Մենք զրանով նրան չեա կմղենք մեր կյանքից, մեզ մոտենալուց: Իհարկե, չի կարելի ալդ վարժունքն աչքաթող անել: Բայց, նայեցեք նրա չերեսին, ինչպես ե կարմրում ամբողջ ժողովի ընթացքում, և միք մոռանա, թե ինչպես լավ ե պահել իրեն վերջին յերեք որվա ընթացքում:

Ուստի և Ֆրիցն առաջարկեց ժողովին ավելի մեծ ուշադրութուն դարձնել ալդ տղայի դաստիարակության վրա, փորի համար անհրաժեշտ ե, վորպեսզի ինչպես ննջարանում, աջնպես ել աշխատանքի սենյակում նա տեղավորվի ավելի հասակավոր տղաների միջև, վորպեսզի նրանք կարողանան լավ ուղղությամբ ազդել նորեկի վրա:

Ժողովն ընդունեց Ֆրիցի առաջարկը: Տեղավորեցին նրան աջ սենյակում, վորից Ֆրիցը պատգամավոր եր: Նա նորեկին իր մոտ տեղ տվեց:

Վորքան չեա կարողացա զրանից հետո դիտել մանկատան կյանքը, ալկա վոչ մի թշուրիմացութուն չպատահեց ալդ տղայի հետ: Ֆրիցին նա աջնպես սիրեց, վոր չերբ մալրը չեկավ նրան տեսնելու, նա միանգամից վազեց ալգին, Ֆրիցի չետեից, վորպեսզի նրան ցուց տա իր մորը:

III

ԺԵՆԻԱՆ ԻՆՉ ՊԱՏՄԵՅ ԼՐՏԵՍԻՆ

Յերեկոները, քնելիս, չերեխաները շատ ելին խոսում աջն մասին, թե ինչպես լավ պիտի լինի խորհրդալին պետության մեջ, թե ինչպես աջատեղ գեղեցիկ պիտի լինի պիտների կյանքը: Ապա հաշվում ելին, թե դեռ ելի ենքան պետք ե նստի բանտում հալրիկը չեթե 6 տարուց արդեն նստել ե 2 տարի և 4 ամիս:

Ժենիան միայն լսում եր ալս ամենը: Նա չեր կարող մասնակցել ալդ խոսակցություններին, վորովհետե, նա ընդամենը դեռ 6 տարեկան եր:

Մի անգամ չերեկոյան քնելուց առաջ, նա լսեց Ֆրիցի պատմածը, թե ինչպես նրա հալրը խաբել ե իրենց մոտ խուզարկության յեկած վոստիկաններին:

Ֆրիցի հայրն ասել ե վոստիկաններին, վոր իր դենքը պահված ե գոմում, և տանում ե նրանց աջտեղ: Ալդ ժամանակ Ֆրիցի մալրը թագցնում ե կոմմունիստական գրքեր: Վոստիկանները հորը

սաստիկ ծեծում են, բայց այնուամենայնիվ տան մեջ վոչ մի կոմունիստական գիրք չեն գտնում, չնայած բոլոր անկյունները շուռ են տալիս:

Ժենիան մինչև այսօր ել սաստիկ զայրացած է վոստիկանների վրա, վորովհետև նա հիշում էր, վոր բանտում հոր հետ տեսակցելու ժամանակ վոստիկանները չթուլատրեցին համբուրելու իր տղային, իսկ այդ պատմութլունից հետո նրա համար պարզվեց, վոր վոստիկանը — թշնամի յե:

Մի գեղեցիկ կիրակի օր, Ժենիան թուլատվու թյուն է ստանում գնալ մօր մօտ: Վորովհետև նրա մայրը հեռու չեր ապրում, նրան թուլլ են տալիս մենակ գնալ: Հենց վոր նա դուրս է գալիս դարպասից, նրան մոտենում է մի անհայտ մարդ, և հյուրասիրում շագանակով: Ժենիան վերցնում է շագանակը, իսկ անձանոթ մարդը համաձայնում է ուղեկցել նրան. ճանապարհին նա սկսում է հարց ու փորձ անել Ժենիային, թե ինչ են սովորեցնում մանկատանը: Մեր Ժենիա, սկսում է նրան պատմել, վոր նա արդեն լավ գրում է, բայց անձանոթն ամեն կերպ աշխատում էր իմանալ, թե ինչ է ասում ուսուցչուհին աստծու, որենքների, բայլչեիկների մասին: Ժենիան այդ ժամանակ հիշում է, վոր ուսուցչուհին շարունակ իրենց ասել է վորպեսզի նրանք ոտար, անձանոթ մարդկանց չպատմեն, թե ինչ է կատարվում

տանն ու դպրոցում, ուստի և վճռում է լռել: Անձանոթը զայրանում է, իբր թե Ժենիան նրան վորևէ կերպ վիրավորել է: Նորից մի քանի անգամ նա առաջարկում է, Ժենիային ամեն ինչ հալոնել, պատմել, բայց վոչինչ դուրս չի գալիս:



Վոստիկանը բարկացած պատասխանեց
«կալանավորում եմ»

Այն ժամանակ, հասնելով առաջին անկյունը, նա կանչեց վոստիկանին, ցույց տվեց մի ինչ վոր թուղթ, վորից հետո վոստիկանն իսկույն պատվի առավ, ինչպես այդ անում են զինվորները: Իսկ անձանոթը հարցրեց վոստիկանին, արդյոք նա չի կալանավորում անհնազանդ չերեխաներին. վոս-

տիկանը բարկացած պատասխանեց — «կալանավորում եմ»:

— Տեսնում ես, ասում է անծանոթը Փենիային, — չեթե չես ուզում, վորպեսզի վոստիկանը քեզ կալանավորի, պատմիր ինձ ամենը:

Փենիան հանկարծ հիշեց Ֆրիցի պատմածը, թե ինչպես հրա հայրը խաբել է վոստիկաններին, և սկսեց շատ լուրջ պատմել անծանոթին, վոր մանկատան աշգուժ թաղված են հրացաններ, իսկ պահեստում՝ ռումբեր: Նա արդեն ուզում էր շարունակել ձեզնարկի (чердак) թնդանոթների մասին, յերբ անծանոթը նորից շաղանակ հանեց գրպանից և հուլբասիբեց նրան:

Դրանով նրանց խոսակցությունը վերջացավ, նրանք բաժանվեցին, և Փենիան գնաց տուն, իր մոր մոտ, վոր տունը վաքրում էր: Մայրն սպիտակացնում էր խոհանոցը, վորովհետև շաբաթվա մյուս օրերը նա զբաղված էր քաղաքում՝ պարոններին մոտ լվացք անելով:

Այդպիսով Փենիային չհաջովեց պատմել մորը վոստիկանի հետ ունեցած իր հանդիպումը, թեպետ նա նախորոք արդեն ուրախանում էր, վոր իր մայրը պետք է ծիծաղեր լրտեսի վրա: Փենիան մի քիչ խաղաց Մանիի հետ, բայց նրան գետ վոչինչ չէր կարելի ասել, վորովհետև աղջիկն ընդամենը յերեք տարեկան էր և վոչինչ հասկանալ

չէր կարող: Յերեկոյան դեռ նա հրաժեշտ տվեց մորը և յետ գնաց դեպի մանկատուն: Մայրը խոստացավ ուրբաթ օրը գալ նրա յետևից և տանել հոր մոտ՝ տեսակցության:

Նա տուն հասավ շատ ուշ, վորովհետև կանգ առավ ֆուդբոլի հրապարակում, վորտեղ խաղում էին գործարանային աշակերտները և վորտեղ նա կարողացավ մի բանի անգամ վազել գնդակի յետևից, յերբ շատ հեռու չէր թռչում աչք:

Մանկատան մոտենալով, Փենիան նկատում է, վոր տան մուտքի մոտ խոնվել է մեծ բազմություն, վոր մի ինչ վոր բանի յեր սպասում և շուրջը դիտում:

— Ի՞նչ է պատահել, — մտածում է Փենիան և դարպասին համեւու համար ճեղքում բազմությունը: Բայց շեմքի մոտ կանգնած է վոստիկանը: Հենց վոր Փենիան բռնեց դրան բռնակից, վոստիկանը բռնեց նրա ոձիքից և ներս գցեց:

Իսկ տանն իսկական շփոթ էր տիրում: Բոլոր ղռներին մոտ վոստիկաններ ելին կանգնած: Բոլոր տղաները հավաքված էին մի տեղ:

Վոստիկաններից մեկը բռնեց Փենիայի ձեռքից և կոպիտ կերպով հրեց նրան դեպի յերեւանների խումբը, այնպես վոր նա գետնին վռվեց: Բայց լաց չեղավ, վորովհետև գիտեր, վոր թշնամու առաջ միայն վախկոտն է լաց լինում: Իսկ վոստիկանը — իսկական թշնամի չէ:

Տղաները ժենիային խնայեցն բարձրացրին և փափսացին ականջին. «խուզարկութուն ե»։ Արգեն գիշեր եր, յերբ վոստիկանները հեռացան։ Ներս մտավ մանկատան ղեկավարներից մեկը և ծիծաղելով պատմեց, վոր վոստիկանները դատարկ լետ գնացին։ Նրանք խոհանոցային սուր դանակ անգամ չգտան։

Մինչ այդ փողոցի ամբոխը, վոր բազմացել եր ու բռնել բոլոր միջավոդոցները ծիծաղում եր հեռացող վոստիկանների վրա. — «վորքան են ձեր սպանվածներն ու վիրավորները»։ «Գրոհել եք բերդը, հերոսներ»։ «Ամոթ, խայտառակութուն. — անպաշտպան յերեսանների դեմ այդքան զինված մարդ»։

«Հերոսներն», իհարկե, իրենց այնքան ել լավ չեյին զգում։

Տղաները վազեցին տուն կարգն աջատեղ վերականգնելու համար, վորովհետև «կարգի պահապանները» իսկական ավազակների նման տալն ու վրա եյին արել ամբողջ տունը։

Մոտ յերկու շաբաթ ժենիան վոչ վոքի չատեց, վոր ինքն ե վոստիկանությանն այդպես խաբել։ Բայց մի յերեկո, անկողնում պառկած ժամանակ նա Վիլլիից խոսք առավ, վոր վոչ վոքի չի պատմի և հայտնեց նրան իր ամբողջ գաղտնիքը։

Վիլլին, սակայն, պայման ուներ Թրիցի հետ,

վոր նրանք մեկը մյուսից վոչինչ չպիտի թազցնեն, այնպես վոր Թրիցն իմացավ ամբողջ պատմութունը։

Այնուհետև մենք բոլորս իմացանք, թե ինչպես ե ժենիան հիմարացնել վոստիկանության։

IV.

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄՎԵՅ ԳԻՐՔՐ

Նամակը Կարլին հասավ աչն ժամանակ, չերբ նա աշխատում էր կազմատանը և կարկատում իր թվաբանության գիրքը: Կարլը, ըստ սովորության, նամակը կարգաց բարձրաձայն: Նրա հայրը գրել էր բանտից, վոր գեռ 8 ամիս ել պետք է նստի աչնտեղ, ապա խնդրում էր Կարլից, վորպեսզի նա իրեն լավ պահի, վորովհետև հոր համար հեշտ կլինի նստել բանտում, չեթե նա իմանա, թե իր վորդին ջանասիրությամբ սովորում է և պատրաստվում, վորպեսզի ապագա մարտերում ոգնի իրեն: Բացի գրանից հայրը գրել էր ուրիշ շատ բաների մասին, աչն մասին թե ինչ է իրեն հարկավոր, բաց աչգ ավելի շուտ մորն էր վերաբերում:

Վերջնականապես վճռեցին, վոր չերեկոյան ընդհանուր նամակ կը գրեն Կարլի հորը և կը հալոնեն, վոր նա կարող է միանգամայն հանգիստ լինել, վորովհետև Կարլը — լավագույն աշակերտն է ընտանեկան խորհրդի անդամ և անցյալ

կիրակիի ցույցին առաջից տանում էր դրոշը: Իսկ դրոշը, չե վոր, չուրաքանչյուրին չեն վստահում:

Անուհետև ամենքը գործի անցան: Միաչն Կարլը մնաց իր տեղում և աչքերը հառել էր առաջն ընկած գրքին, ըստ վորում նամակը մեքենայորեն տեղավորեց կազմի պոկված թերթերի արանքում:

Հանկարծ Կարլի սիրտն ուժգին խփեց: Նա գտավ աչն, ինչ փնտրում էր, նրան հաջողվեց գանել աչն խնդրի բանալին, վորի լուծման վրա նա չերկար մտածում էր:

Մնում էր միաչն իրագործել ծրագիրը: Իրագործման գլխավոր դժվարությունը կաշանում էր նրանում, վոր վոչ վոք աչգ գործի մասին չպետք է իմանար: Իսկ աչգ շատ դժվար էր գլուխ բերել մի տան մեջ, վորտեղ ամենքն էլ ընտելացել էին իրենց բոլոր գործերն աշկարա կատարելու:

Պետք է նամակը փակցնել գրքի կազմին, աչնպես, վորպեսզի վոչ վոք չնկատի աչն: Ճիշտ է, Կարլն արդեն հինգ ամիս է ուսումնասիրում էր կազմարարությունը, բաց աչգ գործն սկսել չեր համարձակվում: Յերեք որվա աշխատանքից հետո, չերբ արդեն բոլոր տղաները բարկացել էին նրա վրա ստիպված լեղավ կանչել Ֆրիցին և հալոնել նրան իր մտադրությունը:

Ֆրիցն աչնքան պարմացավ, վոր քիչ մնաց

խելքը թուցնի այդ հայտնութունից: Չե՞ վոր նը-
րանք կարծում ելին, թե կարլը ինչ վոր հիմար
վեպ կամ աղոթագիրք ե կազմում: Բայց, հենց
վոր Ֆրիցն իմացավ, թե բանն ինչու՞ն ե, դար-
ձավ գլխավոր գաղտնապահը:

Ֆրիցը չերբեք բարկացկոտ չի չեղել, չերբեք
չի կռվել, թեպես ուժեղ աղա չեր և նույնիսկ
մեծ դուլլը մենակ բարձրացնում եր: Բայց այժմ
նրան չեր կարելի մոտենալ: Նա բարձրաձայն
հայտարարեց, վոր չեթե մեկն աշխատանքի ժա-
մանակ կմոտենա կարլի սեղանին, աքացի կը
ստանա:

Կարլը գնաց տուն, վորպեսզի նամակը մորը
տա և նրանից մի գիրք խնդրի՝ հորն ուղարկելու
համար:

— Հայրս պետք ե տեսնի, թե ինչքան լավ
եմ կազմում գրքերը,—ասաց նա մորը:

Մայրը տվեց նրան մի գիրք, վոր նրանք
հաջորդ որը պատրաստեցին կազմելու համար,
իսկ չերեկոյան նամակը գրեցին:

Գրեցին, վոր նրանք չերկուսն ել պիտներ են
և վոր հայրը չի կարող պատկերացնել, թե իրենք
վորչափ են ասում ֆաշիստներին Գրեցին նույն-
պես, վոր ՄՈՊՐ-ն ոգնում ե վոչ միայն իրենց,
այլ և մայրիկին: Ֆրիցն ավելացրեց նաև, վոր
իր հայրը դեռ պետք ե վեց տարի չեկ նստի:

Գիշերը նամակը դնում են Ֆրիցի բարձի տակ,
վորպեսզի վոչ վորքի ձեռքը չընկնի:

Մյուս որը հաջորդությամբ ավարտեցին աշխա-
տանքը: Կարլը կամենում եր, վոր գիրքը կարմիր
կտավի կազմ ունենա, բայց Ֆրիցը դեմ եր,
պարզաբանելով թե վոչ մի կարմիր բան բանտ
տանել չի կարելի. վոր աջտեղ նույնիսկ բողկի
սպիտակներն են ջոկում, կարմիրները չեա ապրիս:

Գիրքը փաշտագործների մասնագիտական գիրք
եր, և դրա համար ել Ֆրիցն առաջարկեց կազմել
շաղանակագույն կտավով, վորը փաշտի գույնն ե
հիշեցնում և համապատասխանում ե գրքի բո-
վանդակութանը:

Կարլն, իհարկե, ընդունեց Ֆրիցի այդ խելոք
առաջարկն առանց վորևե առարկութան: Յերե-
կոյան դեմ ամեն ինչ պատրաստ եր, չե վոր
կարլի մայրը պատրաստվում եր կիրակի որը տե-
սակցել հայրիկի հետ, կարլը նույնպես ցանկա-
նում եր գնալ նրա հետ, վորպեսզի գիրքը հանձնի
հայրիկին:

Բայց տանն ամենքն արդեն սկսել ելին հուզ-
վել: № 3 սենյակում հայտարարեցին, վոր չեթե
Ֆրիցը չերեկոյան դեմ չգա և չպատմի, թե ին-
չու՞ն ե բանը, աղա նրանք մի ամբողջ շաբաթ
չեն խոսի Ֆրիցի հետ, վորովհետե նրանք չեն
վստահում աչն պրոլետարին վոր իր չեղբայր-պրո-
լետարներից թագցնում ե իր գործերը:

Այն ժամանակ Կարլն առաջարկեց հավաքել բոլոր սենյակներին ներկայացուցիչներին ու պատմել նրանց ամեն ինչ:

Կարլը նրանց պատմեց ամբողջ պատմութիւնը և նրանց ուշադրութիւնը դարձրեց այն վրտանգի վրա, վոր իրեն սպառնում է ձերբակալութեամբ, իսկ հորը կալանքի ժամկետի չերկարացումով, չեթե այդ մասին վոստիկանութիւնն իմանա: Իրար հետ խոսելով, չեկան այն չեզրակացութեան, վոր միակ ճիշտ վորոշումն է հայտնել բոլոր սենյակներին Կարլի առաջարկը: Պրոլետարական յուրաքանչիւր մարտիկ կարող է հետաքրքրուել միայն այնպիսի գործով, վորի մեջ կարող է վորեւէ կերպ ոգտակար լինել:

Տվալ գեպքում վոչ մեկի ոգնութեան կարիքը չի գգացվում, ուստի և չպետք է հետաքրքրուել: Մյուս որը չերեկոյան, չերբ հայտնվեց այդ մասին տղաներին, նրանք սկզբում մի քիչ բլթները կախեցին, բայց հետո համաձայնվեցին առաջարկութեանը:

Իսկ կիրակի որը մինչև կեսոր տղաներից միայն հինգ հոգի ելին հուզվում և սպասում գործի հաջող չելքին: Բայց ամենից շատ հուզվեց Կարլը տեսակցութեան ժամանակ: Նույն որը չերեկոյան Կարլը վերագարծավ և հանդիսավոր կերպով պատմեց հաջողութեան մասին: Այն մոմեն-

տում, չերբ բանտի հսկիչը շուտ էր գալիս, Կարլին հաջողվում է հոր ախանջին փսփսալ, վոր գրքի շապկի մեջ նամակ է փակցված: Հայրն ուրախ աչքով արեց:

Փրիցի առաջարկով հինգ չերեխան միասին չերգեցին «Ինտերնացիոնալը»: № 2 սենյակից մոտ վագեց տղաներից մեկը և հարցրեց Փրիցին, թե կարո՞ղ է արգոք չերգել նրանց հետ միասին: Փրիցը գլխով հավանութեան նշան արավ և բոլորը միաձայն շարունակեցին չերգել.— «Սա չե մեր վերջին և վճռական մարտը...»:

V

ԻՆՉՈՒ ՍԻՐԵՅԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻՆ

Մինչև ՄՈՊՐ-ի տուն ընդունվելը, չես շատ քիչ բան գիտելի Ռուսաստանի մասին:

Գիտելի, որինակ, վոր Ռուսաստանը մեծ է, վոր աշխտեղ շատ ցուրտ է, վոր նրա դաշտերում անչափ ձյուն և անթիվ գալլեր կան: Այնուհետև գիտելի նույնպես, վոր աշխտեղ թագավոր կա: Թագավորին չես համարում ելի արքաների արքա: Յես նրան այլ կերպ չելի պատկերացնում, քան նստած գահի վրա, կամ թե չե, վատթարագույն դեպքում, ձիու վրա:

Յես մոտ 10 տարեկան ելի, չերբ իմ մեջ արմատացավ այն գիտակցությունը, վոր Ռուսաստանում հեղափոխություն է կատարվել և վոր աշխտեղ սպանել են թագավորին: Հեղափոխության մասին չես արդեն մի վորոշ պատկերացում ունելի: Ինձ թվում էր, թե հեղափոխություն տեղի չե ունենում հացի պատճառով: Յես այդ տեսակետին ելի հանգել մեզ մոտ՝ Գերմանիա-

յում կատարված Կապլիպուչի (տարերալին, անկաղմակերպ ապստամբության) ժամանակ:

Այն ժամանակ չես մոտ 6 տարեկան ելի: Յեվ մի անգամ չերեկոյան հորս համար ընթրիք տարա բարրիկաղները, ու քանի դեռ նա ուտում էր, չես աշխտեղ նստեցի ու սպասեցի: Բարրիկաղներում գտնվողներից մեկը հարցրեց ինձ, արդյոք գիտե՞մ, թե նրանք ինչու համար են կռվում: Չեմ հիշում արդեն, թե նրան ինչ պատասխանեցի, բայց նա մի լավ ծիծաղեց իմ պատասխանի վրա: Իսկ հայրս ցույց տվեց հոյակապ տներից մեկը և ասեց ինձ. — «Կռվում ենք, վորդիս, նրա համար, վորպեսզի մենք ապրենք այս ապարանքներում և վոչ պարոնները»: Այդ չես լավ հասկացա, և այդ մոմենտից չես սիրեցի հեղափոխությունը, վորովհետև մեր սենյակը շատ վատն էր և գտնվում էր մեծ տան ներքնահարկում:

Ուստի և չես կարծեցի, վոր հեղափոխությունը Ռուսաստանում կատարվել է այսպես. — բոլոր բանվորները փոխադրվել են մեծ ու գեղեցիկ տները, իսկ պարոնները ներքնահարկերը:

Այդ շատ լավ է չեղել: Բայց չես զարմանում ելի, չե՞ վոր հեղափոխությունը կատարել են բալլշևիկները, իսկ նրանց մասին, չես այն ժամանակ շատ վատ բաներ ելի լսել:

Առաջին տեղեկությունները բալլշևիկների մա-

սին ձեռք եմ բերել տրամվայում (եւքտրաքարշում): Իմ կողքին նստել ելին յերկու պարոններ և բարձրաձայն խոսում ելին: Նրանցից մեկը լեկել եր ինչ-վոր հեռու տեղից, — համենայն դեպս, նա այդպես եր հաղնված: Նա պատմում եր մշուսին այն սոսկումների մասին, վոր կատարում են բալլերիկները:

Նրանք յերեխաներին հարցունքերով, հազարներով սովի չեն մատնում, ուտելու բան չեն տալիս, վորովհետև նրանք ամբողջ հացը հավաքում են. վորպեսզի արշավեն կրթված յեվրոպացիների վրա: Բայց այդ դեռ բոլորը չէ: Նրանք սավառնակներից ուսմբեր են նետում այն պտղերի վրա, վորտեղ դեռ բոլորը սովից չեն մեռել և այդպիսով ուսմբ նետել են սովորում:

Յես ալես դադարեցի նրանց խոսակցությունը լսելուց, ալ սկսեցի պատկերացնել, թե ինչքան զարհուրելի պիտի լինի բալլերիկների ձեռքն ընկնելը:

Տանը չես մորս չասեցի այն, ինչ լսել ելի տրամվայում:

Մայրս ամբողջ որն այնպես եր զբաղված, վոր խեղճը ժամանակ չունեի հարց ու փորձ անելու ինձ, թե որվա ընթացքում չես ինչ եմ տեսել կամ լսել:

Հայրս արդեն յերկար ժամանակ տանը չեր:

Նրան բանտ են նստացրել դեռ 1919 թվին նրա համար, վոր նա սպարտակյան*) եր: Հետո նրան բաց թողեցին, բայց կապալի ապստամբության ժամանակ նորից բանտարկեցին, վորովհետև նա ինքն եր պարոնների դեմ:

Համարյա յերկու տարի չես բալլերիկների մասին վատ կարծիքի ելի: Այն քաղաքամասում, վորտեղ մենք ապրում ելինք, պատանի սպարտակյաններ չկալին. տանից հեռուն չեյի գնում, վորովհետև տրամվայի փող չունեյի: Յերեխ չես դեռ յերկար ժամանակ բալլերիկների մասին այդ կարծիքին ել կմնալի, յեթե ինձ հետ մի դեպք չպատահեր:

Յես մոտավորապես 12 տարեկան ելի և արդեն փող ելի վաստակում մորս համար (ածուխ ելի բերում մեր բակի բոլոր բնակիւոյների համար), յերբ մի անգամ յերեկոյան մայրս ուրախուրախ ինձ սկսեց պատմել, վոր չես արդեն չը պետք ե աշխատեմ խանութում վորպես աշակերտ, վորովհետև կարող եմ շարունակել դպրոց հաճախելը: Յեւ այս շնորհիւ այն բանի, վոր մենք ողնություն ենք ստացել բալլերիկներից: Յես միանգամից չհասկացա, թե այդ ինչպես կլինի, և մայրս ինչպես ե պատկերացնում այդ,

*) Սպարտակյանները — կալ իրերի խաբարի և Ռոզա Լյուքսեմբուրգի կողմակերպված «Սպարտակ» հեղափոխական մարտական միության անդամները:

բայց ինձ շատ ուրախացրեց այն գիտակցությունը, վոր չես կարող եմ շարունակել ուսումը, իսկ այդ ինձ թվում էր ամենից կարևորը: Մայրս միանգամից նկատեց, վոր չես հասկացա, թե բանն ինչումն է, և սկսեց պատմել, վոր Խորհրդային Ռուսաստանում այն հին բալլետիկները, վորոնք չերկար տարիներ նստել են բանտերում, ստեղծել են մի ինչ վոր ընկերություն, վորը վորոշել է աշակցություն ցույց տալ կապիտալիստական բանտերում գտնվող բոլոր հեղափոխականներին, ինչպես և այդ հեղափոխականների ընտանիքներին: Ուստի և մենք պետք է ոգնություն ստանանք ՄՈՊՐ-ից (այսպես է կոչվում այդ կազմակերպությունը):

Իմ առաջին կարծիքը բալլետիկների մասին մինչև հիմա ամուր նստել եր գլխումս:

Բայց չես մորս անպայման հավատում ելի, և այժմ, չերբ նա ասեց, վոր բալլետիկներն ոգնում են մեզ և բանտերում նստած բոլոր բանվորներին — չես սկսեցի բալլետիկների մասին այլ կերպ մտածել:

Մեր կյանքը թեթևացավ: Մեր քաղաքամասում ՄՈՊՐ-ն այնքան էլ խոշոր կազմակերպություն չէր, բայց չերբ վորևե ցույց եր կազմակերպվում, այս ժամանակ ՄՈՊՐ-ն ավելի և ավելի մեծ բազմություն եր հանդես բերում ցույցին: Մի չերեկո մայրս մի նամակ բերեց, վոր

մենք ՄՈՊՐ-ի միջոցով ստացել էլինք հեռավոր խորհրդային Ռուսաստանից:

Նամակն ուղարկված եր Սիբիրից. այն գրել էլին մի մետաղագործական գործարանի բանվորներ և նրա մեջ ասում էլին, թե վորովհետև իմ հայրն էլ մետաղագործ է, նրանք պետք է մեզ ոգնեն, ինչով վոր կարող են, ուստի անհրաժեշտ է վոր մենք գրենք, թե ինչ կարիքներ ունինք և նրանք մեզ կուղարկեն ինչ հարկավոր է: Մեր տեսակցություններից մեկի ժամանակ չես ու մայրս տարանք այդ նամակը և հորս ցույց տրվինք, վոր արդեն ձեռքը մեկնել եր, վորպեսզի նամակը վերցնի, սակայն բանտի հսկիչն արգելեց նրան: Այնուհետև չեկավ բանտապետը և ինձ ու մորս դուրս արեց բանտից նրա համար վոր մենք կամեցել ենք հորս նամակ հանձնել: Հորս նույնպես տարան և չերբ քաջում էլին նրա թևից, նա գոչեց մեր չետևից. «Գրեցեք նրանց, վոր մենք ավելի լավ կկովենք, քան մինչև այժմ կովել ենք»:

Այդ չերեկո չես կյանքիս մեջ առաջին անգամ մորս տեսա լաց լինելիս: Յես նրա հետ միասին լաց չեղա և մենք միասին քնեցինք:

Դրանից մի քիչ անց դպրոցական քննություններից հետո, ինձ մորս հետ միասին կանչեցին ՄՈՊՐ, և այնտեղ բժիշկը քննեց ինձ: Իմ

մասին ամեն ինչ գրելուց հետո նա հարցրեց մորս, թե արդո՞ւք համաձայն ե, վոր ամառվա արձակուրդներին չերկու ամսով ինձ տանեն ՄՈՊՐ-ի մանկատունը։ Մայրս նայեց ինձ և պատասխանեց բժշկին, վոր ինձ հարցնի։ Յես այնքան ել լավ չհասկացա, թե ՄՈՊՐ-ն ինչ գործ ունի այդտեղ, բայց իմանալով, վոր նա մեզ շարունակ բարութիւն ե արել, չերկար չտատանվեցի և զլխով արի—«այո»։

Հաջորդ որերը յես տենդագին պատրաստվում ելի մեկնելու։ Մայրս «Մոպր»-ում հատուկ դրամ եր ստացել ինձ անհրաժեշտս պիտակեղեն, կոշիկ ու հագուստ գնելու համար և ամբողջովին զբաղված եր նրանով, վոր կարե այնքան ամուր, վորպեսզի առաջիկա չերկու ամսվա ընթացքում չմաշվեն։ (Նա, իհարկե, չեր կարող իմանալ, վոր Մոպր-ը մեր չերկրորդ հարազատ մայրն եր, և այնտեղ վոչ վոք չեր կարող պատահուոված ու կեդտոտ ման գալ)։

Շուտով, շաբաթ որը, առավոտյան ժամը 8-ին մենք կայարանում ելինք, վորտեղ գտնվում եին մոտ 50 չերեխա, տղա ու աղջիկ. նրանք չեկել ելին մեզ ճանապարհ գցելու։ Այնտեղ սպասում եր նաև հորեղբայրս՝ չերկաթուղայինի տարազով։ Գնացքին ստիպված չեղանք սպասելու մոտ չերկու ժամ։ Այդ ամբողջ ժամանակը մենք չերգում և ուրախանում ելինք։

Մեր հրաժեշտն այնքան ուրախ եր, վոր մոքիցս բաժանվելով, մտքովս անգամ չանցավ լաց լինել։ Մի քիչ լաց չեղա, չերբ արդեն գնացքը կախարանից բավականին հեռացավ։

Ճաշից հետո հասանք Ելզերսբուրգ։ Կալարանում մեզ սպասում ելին մանկատան մի խումբ տղաներ։ Նրանք շնորհակալութուն հայտնեցին իմ ուղղեկցին, վոր ինձ տեղ ե հասցրել, վերջին իմ բազաժը, ինձ իրենց մեջ առան, և մենք ուրախ, չերգելով ուղևորվեցինք տուն։

Այդ չերգից սկսած, այն չերկու ամիսը, վոր յես անցկացրի Մոպր-ի տանը, չերազի պես անցան ինձ համար։

Ուրախ կլանք եր։ Յես չերբեք չեմ մոռանա, թե ինչքան շատ ենք ծիծաղել այնտեղ։

Պատահում եր, վոր տանը, մայրս խնդրում եր ոգնել իրեն սենյակը կարգի բերելու։ Յես այդ անում ելի, բայց միշտ չկամությամբ, վորովհետեւ գտնում ելի, վոր սենյակը կարգի բերելը տղայի զբաղմունք չի։ Իսկ այժմ, Մոպր-ի տանը... Յերբ սենյակները կարգի բերելու հերթն ինձ եր հասնում, յես ուրախանում ելի, վոր կարող կլինիմ ցուլց տալ, թե ենքան լավ եմ ալլում։ Իսկ չերբ գնումներ կատարելու հերթն եր հասնում, յես ուրախանում ելի, վոր չերգելով պետք ե գնանք գնումներ կատարելու։ Իսկ տանն

ինչքան չեյի սիրում, չերբ մայրս ուղարկում եր
ինձ փաշտ գնելու...:

Գալուն մյուս օրը, սկզբից մինչև վերջը կար-
գացի պատի լրագիրը: Յես նման լրագիր դեռ
ևս չեյի տեսել:

Լրագրում կար խորհրդային Վլատկա քաղաքի
պիոներների նամակը: Յես այն չերկու անգամ
կարգացի, վորովհետև Վլատկայի պիոներները
գրել եյին մերոնց, վորպեսզի նրանք աշխատեն
տեղեկանալ, թե ինչպես ե կյանքը խորհրդային
Ռուսաստանում, վորովհետև բուրժուաները ցան-
կանում են մեզ մոլորեցնել. նրանք վախենում
են, չլինի թե պրոլետարներն իմանան, վոր ա-
ռանց բուրժուաների կյանքը հարյուր անգամ լավ ե:

Յես անմիջապես հարցրի Ֆրիցին, արդյոք,
պատասխանե՞լ են նրանք Վլատկայի պիոներնե-
րին: «Մենք արդեն մի քանի անգամ գրել ենք
նրանց», պատասխանեց ինձ Ֆրիցը:

Մի շաբաթ չեր անցել, ինչ չես պատանի
պիոներ գրվեցի: Չե վոր այդ ժամանակամիջո-
ցում չես արդեն կարողացա իմանալ, թե ինչ ե
պրոլետարը: Իմացա, վոր բուրժուան չերբեք լավը
չի լինում, նույնիսկ այն ժամանակ, չերբ նա մի
կտոր հաց ե տալիս մերոնց, վորովհետև նա տա-
լիս ե միայն այն գեպըում, չերբ մինչ այդ ար-
դեն կրկնակին ե խլել քեզանից:

Հիմա չես արդեն իմացա, թե ովքեր են բալ-
չևիկները: Յեվ պիոներ գրվելու ժամանակ չես
համարձակ հայտարարելի, թե բալչևիկները—
նոր աշխարհի կառուցողներն են:

Պատանի պիոներ ընդունվելուց անմիջապես
հետո, չես նամակ գրեցի խորհրդային Ռուսաս-
տանի Սարատով քաղաքի պիոներներին: Մի նա-
մակ ել գրեցի բանտ՝ հորս՝ Ռուսաստան ուղար-
կած նամակիս մեջ նկարագրեցի իմ կյանքը:

Հորս գրեցի միայն, վոր արդեն այստեղ եմ,
նրան չեր կարելի հայտնել նույնիսկ, վոր չես
դարձել եմ պատանի պիոներ, վորովհետև այդ
գեպըում նամակը հորս տալուց առաջ կպատրու-
վեր բանտսպահների կողմից:

Յեվ այդպես ել նրանից պատասխան չստացա:
Բայց չերբ մայրս յեկավ ինձ տեսնելու, ասաց,
վոր հայրս առողջ ե և շատ ուրախ, վոր չես այս-
տեղ եմ և ինձ լավ եմ գգում:

Սարատովից չես շուտով ստացա պատասխան
նամակը: Նամակի հետ ուղարկված եր չեռան-
կունի կարմիր թաշկինակ:

Նամակում մեզ հանձնարարում եյին, վոր-
պեսզի պաշտպանենք խորհրդային Ռուսաստանը,
չերբ լսենք, վոր նրա վրա հարձակում ե պատ-
րաստվում: Նրան պետք ե պաշտպանել, վորով-
հետև այնտեղ բազմամիլիոն բանվորներն ու գյու-

դացիները բալլէիկներ ղեկավարութեամբ սոցիալիզմ են կառուցում, աշխարհիս բոլոր աշխատավորների ազատութեան հիմքն են դնում:

Այդ նամակն ստանալուց հետո շուտով լրացավ Մոպր-ի մանկատնում մնալու իմ ժամանակը, և յես ստիպված չեղա տուն վերադառնալ:



«Ուսուցիչն ինձ վրա խիստ դալբացավ...»

Բոլորովին չեյի ուզում հեռանալ այստեղից, բայց յես չհակառակվեցի, վորովհետև իմացա,

վոր իմ տեղը հարկավոր է հատկացնել մի ուրիշ տղայի, վորի մայրը նստած է բանտում:

Դպրոցում յես առաջին հերթին համոզեցի վեց տղայի, վորպեսզի նրանք պատանի պիոներ դառնան: Դրա համար ուսուցիչն ինձ վրա խիստ զայրացավ, բայց յես նրանից չվախեցա, վորովհետև գիտեյի, վոր հորս պատժի ժամկետը լրանում է և նա ազատ կարձակվի:

Իսկ հայրս ասել էր, վոր չեթե իրենից հետո մնացածներն ել դուրս գան բանտից, աչն ժամանակ արդեն վոչ վոք խորհրդային Ռուսաստանի մասին վատ չի խոսի: Յես մի անգամ այդ մասին ասեցի մեր ուսուցչին, և դրա համար կամենում եյին ինձ արտաքսել դպրոցից: Բայց այդ ժամանակամիջոցում հայրս դուրս չեկավ բանտից, մենք տեղափոխվեցինք այլ քաղաք, իսկ աջտեղ մեր ուսուցիչն ել եր կոմունիստ:

Նա ինձ ու հորս հետ անտառ եր գնում զբոսնելու և շատ ուրախացավ, չերբ յես նրան պատմեցի այն, ինչ տեղի չե ունեցել ելգերսբուրգում:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատանի ընթերցողներին	3
1. Վոստրիկանապետն ինչու բարկացավ	7
2. Ծիծեռնակը	12
3. Ժենիան ինչ պատմեց լրտեսին	21
4. Ինչպես կազմվեց գիրքը	28
5. Ինչու սիրեցի բալլերիկներին	34

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0191543

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.